

նայ համար, և որք կանխեցին քան ըզնա. Տիգրանէն ցվահէ եկող իշխանը հաւանորէն հայապաշտէն էին:

2. Պարոյր եղաւ առաջինն յետ Արամայ, որ զինու զօրութեամբ միացոյց վերդիշեալ նահանգաց նախարարութիւնները Արարատայ թագաւորութեան հետ, և եղաւ միահեծան տէր: Նոյն ինքն իբրեւ զաշխակից Մա-

րաց՝ մեծամեծ դեր խաղաց Ասորեստանեայց դէմ և ի կործանման Նինուէի, և ինքն Արարատեան թագաւորութեան փառքը վերականգնեց, աւարտ գորական թշնամեյն անկմամբ: Այս մասին արձանագրութեանց տուած հետաքրքրական պատմութիւնն և աւետանք տես ի Բաղմ. Հանգ. հտ ԽԳ. Պրակ Բ. էջ 108 — 113:

Հ. ԲԱՐՍԵՂ. ՍԱՐԳՈՅԵՍ

ՍՏԵՓԱՆՈՍ ԹՈՇԻՍ

Հետեալ համառոտ տեղեկութիւնը Ստեփանոս Թոշայի վրայք՝ կը քաղենք Սաղովկ Պառոնը հայագի քահանային կիսապատմութեան հայոց Փոտոյիոյ անուամբ մատենէն, որ տպագրեալ է ի Լէմպէրկ 1856 ամին, ի լեհ լեզու: Իսկ Ստեփանոսի Հայկազնեան բառարանին վրայք նոխացոյն տեղեկութիւն ստանալ փափաքողաց, ցոյց կու տամք նոյն գրքոց վրայ գրուած հմտալից ճառ մը ի Բաղմաւ վէպն 1852 ամին, էջ 86:

Թոշա Ստեփան, որդի Ստեփանի Թոշա, ծնաւ 28 մարտի 1670 ամին, ի Կամենից քաղաք Փոտոյիոյ: Ի մանկութեան իւր հոգեւէր և հեղ բարոք՝ նշան տրուաւ որ արժանաւոր է հոգեւորական կարգի. վասն որոյ առաքեցաւ ի Հոռով, ուր ի Մաւալոցին Ս. Հաստոց, իւր անխնայ հետադարձեամբ յուսմանով այնչափ առաւ զնայ՝ որ արժանի եղաւ փիլիսոփայութեան և աստուածաբանութեան վարդապետ կոչուելու: Քանի մի տարի վերջի՝ քահանայաւորով՝ դարձաւ ի Փոտոյիոյ, հետը բերելով յանձնարարական նամակ մի առ ներկայացուցին Ս. Գառնէն ի Լեհաստան:

Եւանգելագին և անխնայ քարոզելով զբան Տեառն, և հսկելով ի վերայ այգոյ Տեառն, քիչ տանէին Սթանիսլաւի ժողովրդապետութիւնը ձեռք առաւ: Քետոյ եղաւ ևս Աւագերէց (decanus) Փոտոյիոյ և Փոքոցի եկեղեցեաց: Մեծ գործունէութեան ցոյց տուաւ այս պաշտօնիս մէջ, որով քիչ ատենէն Մեծաւորի (official) պաշտօնն իրեն յանձնուեցաւ: Բարեկարգեց Փոտոյիոյ, Փոքոցի և Սկմբոճի եկեղեցիքը, ուր մինչև յետին ժամանակս նորա մաշտոցով կը վարէին: Նա այն տեսակ անձանց կարգէն էր, որք արհամարհելով զփառս աշխարհի, միայն յերկինս յառած են իրենց աշ-

քերն, և առ ոտն կոխելով զամենայն՝ միայն Քրիստոսի օրինաց կը հետևին, և նորա դիմաց միոյն ծունդ կը կրկնեն, որոյ հարկ է որ զենն ծուր ամենայն արարածք: Բոլորով արտի նա տուած էր ինքզինքը ճանապարհին փրկութեան, վասն որոյ մեծ եղաւ նորա գիտութեան և արդարութեան անունն, և պատգամ էին նորա խօսքերն ազգայնաց առաջի: Սակայն ոչ միայն ազգայինք նորա խորհրդով կը վարէին, այլ և օտարը դժուարակնճիւն պատահարաց միջոց, նորա խորհրդոց կը հպատակէին: Ի 1727 ան, համաձայնութիւն ծագելով Կամենիցի Երբորդակնաց և Կարմենաց մէջ, Սանդինի՝ նուիրակ Սրազանին, Կամենիցի Հոգիոս եպիսկոպոսին յանձնեց այն գործը, և հայտարար երկուց կողմանց ընտրեց զԹոշա Ստեփանոս, որոյ մինչորդութեամբ ամէն տարաձայնութիւնք բարձան և երկու կողմէն ևս զուէ մնացին:

Այս երևելի անձն իւր արդիւնալից, երկիւղած և աշխատաւոր կեանք կըբած է ի 31 հոկտեմբերի, 1739, ի Սթանիսլաւով քաղաքի. ուր յորձանագրութեան նմիկցելոց ի ցուցակին գրած կայ այսպէս. Stephanus Roscka singularis doctrinae, eruditionis ac pietatis Prae-latus, plurimis saeculis memorandus, qui editia plurimorum voluminibus, vere cum sole dispersit manus suas ab Occidente in Orientem plenus dierum et meritorum confessus et sacra synæi refectus obiit.

Իւր երկաթորութիւնքն են հետեւեալքն. Արիստոտելի Փիլիսոփայութիւն, 2 հատոր. Աստուածաբանութիւն դպրոցական, 2 հատոր. Բառարան հայ-լեհ, լեհ-հայ. Կենսագրութիւն եպիսկոպոսաց Հայոց ի Լեհս. Մաշտոց Հայոց գրեալ ի նմանէ ի թեմականց: